Հայտերի ներկայացման հրավեր

Հայաստանի Հանրապետություն

28 սեպտեմբերի 2016 թ.

Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագիր

Վարկ No P148836

Պայմանագիր # TLR-05/07

ՓԱԹԵԹ-1, TLR-05, Ախթալայի թիվ 2 դպրոցի վերակառուցում

ՓԱԹԵԹ-2, TLR-07, Ստեփանավանի համաբուժարանի վերակառուցում

1. Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է ֆինանսավորում Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի համար և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել **«ՓԱԹԵԹ-1, TLR-05, Ախթալայի թիվ 2 դպրոցի վերակառուցում» և «ՓԱԹԵԹ-2, TLR-07, Ստեփանավանի համաբուժարանի վերակառուցում»** պայմանագրերի շրջանակներում վճարումներ իրականացնելու համար:
2. Սույնով **Լոռու մարզի Ախթալա քաղաքի Ծրագրի իրականացման կոմիտեն և Ստեփանավան քաղաքի Ծրագրի իրականացման կոմիտեն** հրավիրում են ներկայացնել կնքված փաթեթներ իրավասու մասնակիցներից՝ **«ՓԱԹԵԹ-1, TLR-05, Ախթալայի թիվ 2 դպրոցի վերակառուցման» և «TLR-07, Ստեփանավանի համաբուժարանի վերակառուցման» համար**:

Որակավորման պահանջները ներառում են.

ՓԱԹԵԹ-01, TLR-05, Ախթալայի թիվ 2 դպրոցի վերակառուցում ա/ վերջին երեք տարիներից որևէ մեկ տարում հաջողությամբ կատարված **246,000,000 դր.** դրամի շին. աշխատանքների ծավալ, բ/ վերջին հինգը տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու կատարած առնվազն երկու պայմանագրեր՝ քաղաքացիական շենքերի կառուցման կամ վերակառուցման: Ներկայացվող աշխատանքներից յուրաքանչյուրի արժեքը չպետք է պակաս լինի **143,000,000 դր.** ՀՀ դրամից, կամ մեկ պայմանագիր առնվազն **286,000,000 դր.** ՀՀ դրամ, գ/ նվազագույնը **27.000.000** դրամի իրացվելի միջոցներ և/կամ վարկային գիծ, դ/ որպես պայմանագրի շնորհման նախապայման, հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված «**Քաղաքացիական**» և «**Էներգետիկական**» լիցենզիաներ:

ՓԱԹԵԹ-02, TLR-07, Ստեփանավանի համաբուժարանի վերակառուցում

ա/ վերջին երեք տարիներից որևէ մեկ տարում հաջողությամբ կատարված **246.000.000** դրամի շին. աշխատանքների ծավալ, բ/ վերջին հինգը տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու կատարած առնվազն երկու պայմանագրեր՝ քաղաքացիական շենքերի կառուցման կամ վերակառուցման: Ներկայացվող աշխատանքներից

յուրաքանչյուրի արժեքը չպետք է պակաս լինի **142,000,000 դր.** ՀՀ դրամից, կամ մեկ պայմանագիր առնվազն **284,000,000 դր.** ՀՀ դրամ, գ/ նվազագույնը **27.000.000** դրամի իրացվելի միջոցներ և/կամ վարկային գիծ, դ/ որպես պայմանագրի շնորհման նախապայման, հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված «**Քաղաքացիական**» լիցենզիա:

3. Մրցույթն իրականացվելու է Ազգային մրցակցային մրցույթի միջոցով, համաձայն Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «*Ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՄԶՎԲ փոխառությունների և Համաշխարհային բանկի վարկերի ու դրամաշնորհների փոխառուների կողմից*» Հունվար 2011 թ. վերանայված Հուլիս 2014 թ. «Գնումների ուղեցույցներ»: Բացի այդ, խնդրում ենք ծանոթանալ նաև 1.6 և 1.7 ենթակետերի հետ, որոնք սահմանում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:
4. Շահագարգռված իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամից և ուսումնասիրել Մրցութային փաստաթղթերը աշխատանքային ժամերին 10.00–17.00 հետևյալ հասցեով ք. Երևան, Կ.Ուլնեցու 31, 4-րդ հարկ, 407 սենյակ:
5. Շահագրգիռ իրավասու մասնակիցները Մրցութային փաստաթղթերն ամբողջությամբ Հայերեն լեզվով կարող են ստանալ վերոնշյալ հասցեով՝ վճարելով 3000 ՀՀ դրամ չվերադարձվող գումար: Վճարումն իրականացվում է բանկային փոխանցումով: Փաստաթղթերը տեղադրված են նաև www.gnumner.am կայքէջում:
6. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով ամենաուշը **2016 թ-ի հոկտեմբերի 27-ին, ժամը 12:00-ին**: Առաջարկները ***չեն կարող*** ներկայացվել էլեկտրոնային եղանակով: Ուշացված առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկները հրապարակայնորեն կբացվեն մրցույթի մասնակիցների նշանակված ներկայացուցիչների, ինչպես նաև բացմանը ներկա գտնվելու բոլոր ցանկացողների ներկայությամբ ստորև նշված հասցեով:
7. Բոլոր առաջարկները պետք է ուղեկցվեն մրցույթի ապահովման հայտարարագրով: Յուրաքանչյուր Փաթեթի հայտը պետք է ուղեկցվի առանձին Հայտի ապահովման հայտարարագրով:
8. Վերոնշյալ հասցեն է՝

ՓԱԹԵԹ-01, TLR-05

Ում. Հայկազ Խաչիկյան

Լոռու մարզի, Ախթալա քաղաքի Ծրագրի իրականացման կոմիտեի նախագահ

ՓԱԹԵԹ-02, TLR-07

Ում. Միքայել Ղարաքեշիշյան

Լոռու մարզի , Ստեփանավան քաղաքի Ծրագրի իրականացման կոմիտեի նախագահ

Հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Սոս Սարգսյան 1 /Քաղաքապետարան/